3472

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ-126
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «25» «03» 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պետական մարմին)՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Գ. Սաֆարյանի, մի կողմից, «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Ս. Բալբաբյանի, մյուս կողմից, (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պետական մարմինը հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Պետական մարմնի կողմից հատկացված միջոցներն ուղղել Հայ կոմպոզիտորական արվեստի 13-րդ փառատոնի կազմակերպման ծախսերին՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող ծրագրի (Հավելված N 1), ծախսերի նախահաշվի (Հավելված N 2) և կատարողական ցուցանիշների (Հավելված N 3):

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 *Պետական մարմինը պարտավոր է՝*

2.1.1. Ի կատարումն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի մարտի 25-ի N 468-Ա/2 հրամանի՝ հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ֆինանսավորվող մշակութային դրամաշնորհային ծրագրերի «Երաժշտարվեստի նախագծեր» անվանակարգի մասնագիտական խմբի 2022 թվականի մարտի 17-ի նիստի N 5 արձանագրությունը՝ Կատարողին հատկացնել գումարը «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «1168. Արվեստների ծրագրի» «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված անհատույց դրամաշնորհների հաշվին,

2.1.2. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում ընդունել Կատարողի կողմից Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված հաշվետվությունները, ընդունելուց հետո ստորագրել հանձնման-ընդունման արձանագրությունը:

2.2. *Պետական մարմինն իրավունք ունի՝*

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ չմիջամտելով վերջինիս գործունեությանը,

2.2.2. Կատարողի կողմից Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում հետ պահանջել փոխանցված գումարը, միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,

2.2.3. Կատարողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարված աշխատանքները,

2.2.4. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում Կատարողից պահանջել ներկայացնել Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով նախատեսված հաշվետվությունը:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվի, ինչպես նաև Պայմանագրի այլ պարտադիր պահանջները,

2.3.2. Պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն աշխատանքների կատարման ընթացքի մասին,

2.3.3. Մինչև Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված հաշվետվությունների ներկայացման ժամկետի ավարտը Պետական մարմնին ներկայացնել հաշվետվություն (ֆինանսական և բովանդակային) իր կողմից իրականացված ծախսերի և կատարված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը պարունակում է Պետական մարմնի կողմից հաստատված ձևանմուշով լրացված ձևը (նախահաշվի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կատարողի մոտ, վերջինս պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար), իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառման իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.3.4. Պայմանագրից բխող աշխատանքները չկատարելու դեպքում վերադարձնել Պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5,0 (հինգ) տոկոսի չափով,

2.3.5. Հրապարակել Պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.3.6. Ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ Պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները վերացնելու նպատակով,

2.3.7. Սույն Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների կատարման գործընթացը կազմակերպել «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.3.8. Պայմանագրով սահմանված աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան մինչև 2022 թվականի դեկտեմբերի 23-ը:

2.4. *Կատարողն իրավունք ունի՝*

2.4.1. Պետական մարմնի կողմից Պայմանագրի 2.1.1-ին ենթակետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով Պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,

2.4.2. Անհրաժեշտության դեպքում Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների իրականացման համար Պետական մարմինը Կատարողին հատկացնում է 11000,0 հազար (տասնմեկ միլիոն) դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի,

3.2.Պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը Կատարողին հատկացվում է Պայմանագրի կնքումից հետո, իսկ 20 %-ը՝ Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ Կատարողի հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների

չագործված գումարները 2022 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյջե:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված աշխատանքները Կատարողի կողմից ներկայացվում են Պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան Պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն:

4.2. Ծրագրով նախատեսված ոչ ֆինանսական ցուցանիշները չեն կարող ներառվել 02.02.2022 թ. դրամաշնորհի տրամադրման N ՄՇԴ-56 պայմանագրով նախատեսված ոչ ֆինանսական ցուցանիշներում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունները Կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ Պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու համար կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում մյուս կողմին պատճառած վնասների լրիվ ծավալով՝օրենքով սահմանված կարգով,

5.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների լրիվ չափով փոխհատուցում,

5.3. Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը Կատարողի կողմից այն կատարել շարունակելն աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում Պետական մարմինը իրավունք ունի կամ ստանալ Պայմանագրի 3.1-ին կետով նախատեսված գումարի լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել Պայմանագրի հարկադիր կատարումը,

5.4. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների համար պայմանագրով սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պետական մարմնին վճարում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված աշխատանքների արժեքի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար,

5.5. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար նախատեսված ժամկետները չպահպանելու դեպքում Կատարողը Պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը մինչև 2022 թվականի մարտի 31-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 2022 թվականի ապրիլի 30-ը:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

7.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի

գության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող անխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8.ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

9.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պարտավորությունների ողջ ծավալով կատարման ավարտը:

9.2. Սույն Պայմանագրի գործողությունը տարածվում է 2022 թ. մարտի 22-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

10. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

10.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ,

10.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից,

10.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կատարողին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ,

10.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր,

10.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կատարողից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

11. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

11.1. Պայմանագիրը կազմված է 9 թերթից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ,

11.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

12. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ
Երևան, Վ. Սարգսյան 3	Երևան, Սայաթ Նովայի 1,
Կառավարական տուն N 2	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	h/h N 900018001405, հվհհ 02628699
ՀՀ 900011032878, հվհհ 02698732	հեռ. 098310350
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
---------- Գ. Սաֆարյան	---------- Ս. Բալբաբյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ. Տ.	Կ. Տ.

Հավելված N 1
«25» «03» 2022 թ.
N ՄՇԴ-126 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ

Հայ կոմպոզիտորական արվեստի 13-րդ փառատոնի

1	Կազմակերպության անվանում	«Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	ք. Երևան, Սայաթ-Նովա 1ա, 0001
3	Ծրագրի անվանում	Հայ կոմպոզիտորական արվեստի 13-րդ փառատոն
3.1	Բովանդակություն	Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնը 2010 թվականից ի վեր հավատարիմ է իր առաքելությանը՝ հայ դասական և արդի կոմպոզիտորական դպրոցի, դրա ավանդույթների ժողովրդականացում, պահպանում և ճանաչման ընդլայնում հայ և արտասահմանյան երաժշտասերների և կատարողների շրջանում: Փառատոնի կարևորագույն բաղադրիչներից է հայ կոմպոզիտորների սիմֆոնիկ և կամերային ստեղծագործությունների ձայնագրումը, տեսագրումը, նոտաների թվայնացումը և պահպանումը: Հայտնի է, որ հայ կոմպոզիտորների բազմաթիվ ստեղծագործությունների նոտաներ հիմնականում գտնվում են կոմպոզիտորների արխիվներում և անհասանելի են համերգասրահներից կատարման համար: Յուրաքանչյուր տարի փառատոնի ընթացքին զուգահեռ իրականացվում են հայ կոմպոզիտորների արժեքավոր ստեղծագործությունների նոտաների (պարտիտուրների և նվագաբաժինների) թվայնացման աշխատանքներ: Հենց նոտաների անմխիթար վիճակում լինելու կամ ընդհանրապես նվագաբաժինների բացակայության պատճառով տարիներ շարունակ անհնար է դառնում այդ ստեղծագործությունների կատարումը: Փառատոնի բազմամյա գործունեության ընթացքում թվայնացվել են հայ կոմպոզիտորների 100-ից ավելի սիմֆոնիկ ստեղծագործություններ, ձայնագրվել են 250-ից ավելի երաժշտական երկեր, իրականացվել են 170-ից ավելի պրեմիերաներ՝ ներգրավելով Հայաստանում գործող երգչախմբերին, նվագախմբերին և կամերային համույթներին: Փառատոնը նաև հնարավորություն է ստեղծում հայ երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործությունների հնչեցման համար: Փառատոնի համերգային երեկոներին հանդես են գալիս մենակատարներ արտերկրից և Հայաստանից՝ ընդգրկելով վերջիններիս երկացանկում հայ դասական և ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններ: Այն հարթակ է նաև երիտասարդ տաղանդավոր արտիստների համար և հնարավորություն է ընձեռում նրանց ներկայանալ հայ կոմպոզիտորների կոնցերտների և կամերային ստեղծագործությունների կատարմամբ: 13-րդ հայ կոմպոզիտորական փառատոնը ներառում է 3 համերգային երեկո: Նվագախմբի նախաձեռնությամբ փառատոնի շրջանակներում առաջին անգամ կհնչեն Մարտին Ուլիխանյանի «Հայկական պարերը» սիմֆոնիկ նվագախմբի կազմով: Երկար տարիների դադարից հետո կհնչի Մարտին Վարդազարյանի Սիմֆոնիան: 2022 թվականին լրանում է Էդուարդ Բաղդասարյանի և Օհան Դուրյանի 100-ամյակը և այդ կապակցությամբ փառատոնի փակման համերգին կնչեն այս կոմպոզիտորների ստեղծագործությունները, որոնք նույնպես երկար տարիներ չեն հնչել մեծ բեմից: Փառատոնի շրջանակներում կհնչեն նաև Առնո

		Բաբաջանյանի «Հերոսական բալլադ»-ը, Վարդան Աճեմյանի թիվ 2 դաշնամուրի կոնցերտը, ժամանակակից կոմպոզիտոր Նուբար Ասլանյանի «Մուսալեռցիներ» ստեղծագործությունը և մի շարք այլ հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ: Փառատոնի բոլոր համերգները ձայնագրվում և տեսագրվում են ժամանակակից բարձրակարգ սարքավորումների միջոցով: Արդյունքում ձայնագրությունները և տեսագրությունները հետարտադրողական ընթացքից հետո կտեղադրվեն նվագախմբի սոցիալական էջերում: Փառատոնի շրջանակներում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ որպես մենակատարներ հանդես կգան դաշնակահարներ Արուս Աճեմյանը (Հայաստան), Ժան-Պոլ Գասպարյանը (Ֆրանսիա), Արմինե Գրիգորյանը (Հայաստան) և ջութակահար Կարեն Շահգալդյանը (Հայաստան): Փառատոնի համերգները կղեկավարեն դիրիժորներ Սերգեյ Սմբատյանը և Վահագն Պապյանը:
3.2	Նպատակ	Հայ դասական և արդի կոմպոզիտորական դպրոցի ավանդույթների պահպանում և ճանաչման ընդլայնում հայ և արտասահմանյան երաժշտասերների և կատարողների շրջանում: Փառատոնի կարևորագույն նպատակն է հայ կոմպոզիտորների սիմֆոնիկ և կամերային ստեղծագործությունների ձայնագրումը, տեսագրումը, նոտաների թվայնացումը և պահպանումը, որի նպատակն է հայ երաժշտարվեստի կենսակայության պահպանումը հայաստանյան և միջազգային մշակութային համապատկերում:
3.3	Անցկացման ժամկետ	Մարտի 23, 26, 30, 2022 թ., ժամը՝ 19:00
3.4	Անցկացման վայր	Երևան, «Արամ Խաչատրյան» համերգասրահ
3.5	Ակնկալվող արդյունքներ	20-րդ դարի և ժամանակակից հայ կոմպոզիտորների երկար տարիներ չհնչած ստեղծագործությունների կատարում, ստեղծագործությունների նոտաների թվայնացում և պահպանում, կոմպոզիտորների ստեղծագործությունների ձայնագրում և տեսագրում, դրանց տարածումը հայտնի միջազգային մեդիա հարթակներում: Հայ կոմպոզիտորների մասին իրազեկման մակարդակի բարձրացում հանրության լայն շրջանակներում:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	2106 հանդիսատես, 3 համերգ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878, հվhh 02698732
Գլխավոր քարտուղար՝
---------- Գ. Սաֆարյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ
Երևան, Սայաթ-Նովայի 1,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h N 900018001405, հվhh 02628699
հեռ. 098310350
Տնօրեն՝
---------- Ս. Բալբաբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 2
«25» «03» 2022 թ.
N ՄՇԴ 126 պայմանագրի

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

Հայ կոմպոզիտորական արվեստի 13-րդ փառատոնի կազմակերպման ծախսերի
(3 համերգ)

Հ/Հ	Ծախսատեսակի անվանումը	Միավոր	Քանակ	Միավորի արժեքը (դրամ)	Գումարը (հազար դրամ)
1	**Վարձատրություն** *(ներառյալ հարկերը)*				**3,484.0**
	Հաղորդավար	համերգ	3	40,000	120.0
	Հրավիրված երաժիշտներ	մարդ/միջին	10	104,000	1,040.0
	Պարտիտուրների և նվագաբաժինների թվայնացում. էջադրում և շարվածք	էջ	640	1,000	640.0
	Անիմացիոն հոլովակի պատրաստում	մարդ	1	68,000	68.0
	Մենակատար	մարդ	1	320,000	320.0
	Դիրիժոր	մարդ	1	960,000	960.0
	Դաշնամուրի լարում	անգամ	8	27,000	216.0
	Լուսանկարահանում	համերգ	3	40,000	120.0
2	**Գովազդային և տպագրական ծախսեր**				**766.0**
	Հրավիրատոմս	հատ	900	350	315.0
	Ֆլայեր	հատ	1,500	120	180.0
	Բաններ (3 մ x 2 մ)	հատ	3	12,000	36.0
	Բաններ (3 մ x 8,8 մ)	քառ.մ.	25	2,280	57.0
	Բաններ (3 մ x9 մ)	քառ.մ.	27	2,148	58.0
	Բուկլետի տպագրություն	հատ	120	1,000	120.0
3	**Վարձակալության ծախսեր**				**1,750.0**
	Կրթամշակութային կամ թատերահամերգային միջոցառում իրականացնելու համար ծառայությունների մատուցման սակագին («Արամ Խաչատրյան» համերգասրահի վարձակալություն)	օր	3	500,000	1,500.0
	Գործիքների վարձակալություն (տավիղ, տիմպանի)	օր/հատ	10	25,000	250.0
	Այլ կազմակերպական ծախսեր				**2,630.0**
	Լուսային և ձայնային կարգավորում	ծառայություն	3	150,000	450.0
	Տեսանկարահանում՝ 7 տեսախցիկով	ծառայություն	3	500,000	1,500.0

4	Աուդիո ձայնագրություն, հնչած ստեղծագործությունների ձայնագրությունների կարգավորում և թողարկման ենթակա ֆայլերի պատրաստում	ծառայություն	3	200,000	600.0
	Ծաղիկներ արտիստներին	փունջ	10	8,000	80.0
5	**Տրանսպորտային ծախսեր**				**152.0**
	Ներքաղաքային տրանսպորտ (մենակատարների տեղափոխում)	անգամ	8	3,000	24.0
	Տրանսֆեր՝ Երևան-օդանավակայան-Երևան	անգամ	6	8,000	48.0
	Գործիքների փոխադրում (համերգ և փորձեր)	անգամ	8	10,000	80.0
6	**Հրավիրված մասնակիցների կեցության ծախսեր**				**384.7***
	Հյուրանոց մենակատարների համար (1 մարդ, 5 օր)	օր/մարդ	5	32,700	163.5
	Հյուրանոց լրագրողի համար (1 մարդ, 4 օր)	օր/մարդ	4	20,300	81.2
	Հյուրանոց դիրիժորի համար (1 մարդ, 5 օր)	օր/մարդ	5	28,000	140.0
	ԸՆԴԱՄԵՆԸ				**9,166.7**
	ԱԱՀ				**1,833.3**
	ԱՄԲՈՂՋԸ				**11,000.0**

*** ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման կատարողի կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878, հվհհ 02698732
Ղեկավար քարտուղար՝
_____ Գ. Սաֆարյան
(ստորագրություն)
Գ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ
Երևան, Սայաթ Նովայի 1,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ N 900018001405, հվհհ 02628699
հեռ. 098310350
Տնօրեն՝
_____ Մ. Բալբաբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
«25» «03» 2022 թ
N ՄՇԴ-126պայմանագրի

Պետական դրամաշնորհի շրջանակներում իրականացվող միջազգային նախագծերի կատարողական ցուցանիշներ

1. Վաճառված տոմսերի քանակ (բացառությամբ հովանավորչական միջոցներով կազմակերպված միջոցառումների) թվով՝ 1200
2. Պետական ֆինանսավորման տոկոսային հարաբերությունը ֆինանսավորման այլ աղբյուրների համեմատ
   Պետական ֆինանսավորում 70 տոկոս
   Համաֆինասավարում 30 տոկոս
3. Նախագծի հանրայնացման ընթացքում լրատվամիջոցների ներգրավվածություն (զուտ տեղեկատվություն և վերլուծական նյութեր, այդ թվում՝ օտարերկրյա ՀԼՄ-ներում)
   Հայաստանյան մեդիա - 50 տեղեկատվական և վերլուծական նյութեր
4. SMM (Social Media Marketing) ցուցիչներ
   Հայ կոմպոզիտորական արվեստի 13-րդ փառատոնի ֆեյսբուքյան էջի հավանումների թիվը՝ 4,146 է, որը նախատեսվում է մեծացնել մինչև 4,300-ի:
5. Կազմակերպության հետ համագործակցող կամավորների քանակ
   Նախատեսվում է ներգրավել թվով 10 կամավորներ
6. Գովազդատեղեկատվական արշավ. հանրային լայն ճանաչում ունեցող մարդկանց ընդգրկվածություն, նախագծի հանրային ճանաչելիության բարձրացմանն ուղղված այլ միջոցառումներ
   Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի թվային հարթակներում ներկայացված էջերում, այդ թվում՝ Հայ կոմպոզիտորական արվեստի 13-րդ փառատոնի ֆեյսբուքյան էջում իրականացվում են գովազդային արշավներ, որոնք ուղղված են թե՛ միջոցառման ճանաչելիության բարձրացմանը, թե՛ հայ հանրության շրջանում փառատոնին մասնակցող երաժիշտների հայտնիության խթանմանը: Տեղեկատվական արշավները նպատակ ունեն նաև ավելի մեծ թվով մարդկանց իրազեկել փառատոնի շրջանակում անցկացվող համերգների մասին:
7. Հրավիրյալ ստեղծագործողների (հայ և օտարազգի) քանակ՝ 13
8. Ինքնազբաղ/անկախ ստեղծագործողների ներգրավվածություն՝ 4 մենակատար, 1 դիրիժոր:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ
Երևան, Վ. Սարգսյան 3	Երևան, Սայաթ Նովայի 1,
Կառավարական տուն N 2	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	h/h N 900018001405, հվhh 02628699
Հ/Հ 900011032878, հվhh 02698732	հեռ. 098310350
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
---------- Գ. Սաֆարյան	---------- Ս. Բալբաբյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ. Տ.	Կ. Տ.